ԱՐԱՄ ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

1983 թ. հունիսի 9-ին մահացավ Հայկական ՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալ Արամ Տիգրանի Ղանալանյանը։

Արամ Ղանալանյանը ծնվել է 1909 թ. փետրվարի 12-ին Ախալցխայում։ Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրում, իսկ միջնակարգը՝ Թբիլիսիում։ 1927 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետի լեզվագրական բաժինը։ 1932 թ. նա աշխատանքի է անցնում Հայաստանի նյութական կուլտուրայի ինստիտուտում, ապա՝ աշխատում է Հայաստանի կուլտուրայի պատմության, պատմության և գրականության, Արմֆանի լեզվի և գրականության ինստիտուտներում՝ զբաղվելով հայ ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությամբ։ 1943 թ. Հայկական ՍՍՀ ԳԱ հիմնադրման օրից մինչև իր կյանքի վերջը նա աշխատում էր Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում։

Արամ Ղանալանյանը սովետահայ բանագիտության դպրոցի հիմնադիրներից է։ Դեռևս ուսանողության տարիներին՝ 1927—32 թթ. Երևանի պետական համալսարանի պատմա-գրական բաժնում սովորելիս նա առանձին հետաքրքրություն է ցուցաբերում ժողովրդական բանահյուսության նկատմամբ, և այդ առարկայի դասախոս, մեծանուն գիտնական Մ. Աբեղյանի ղեկավարությամբ խորամուխ է լինում հայ բանագիտության մեջ։ Ուսումնառությունից հետո աշխատանքի անցնելով գիտահետազոտական հիմնարկներում, նա զբաղվում է բանագիտական տարբեր խնդիրների ուսումնասիրությամբ։ 30-ական թվականներին գրի է առնում «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի երկու նոր պատումներ, Մ. Աբեղյանի և Գ. Աբովի հետ կազմում «Սասունցի Դավիթ» հյուսվածո-համահավաք բնագիրը, որ հրատարակվել է մի քանի անգամ և թարգմանվել աշխարհի բազմաթիվ լեզուներով։ Հրապարակում է «Սասունցի Դավիթ» և «Սասունցի Դավթի» պատմիչների կյանքն ու ստեղծագործությունը» ուսումնասիրությունները։ Նրա մի շարք աշխատություններ նվիրված են բանագիտության տեսության ու պատմության հարցերին, ինչպես՝ «Ժողովրդական բանահյուսության մի քանի հարցեր», «Գարեգին Սրվանձտյան», «Մ. Աբեղյանի կյանքն ու գործունեությունը» և այլն։

Վաստակաշատ բանագետի գիտական հետաքրքրությունների ոլորտում են եղել գեղարվեստական գրականության և բանահյուսության փոխառնչությունների խնդիրները։ Այս հարցերին են նվիրված «Պռոշյանը և ժողովրդական բանահյուսությունը», «Ավետիք Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները», «Աբովյանը և ժողովրդական բանահյուսությունը», «Սայաթ-Նովայի ստեղծագործության ժողովրդական ակունքները», հետազոտություններ Ղ. Ադայանի, Մ. Նալբանդյանի, Հ. Պարոնյանի, Հ. Թումանյանի, Վ. Սարոյանի մասին, որոնց մեջ քննարկվում են հայ դասական գրողների կողմից բանահյուսական նյութերի վերամշակման եղանակները և ցույց է տրվում բանարվեստի դերը նրանց ստեղծագործությունների ժողովրդայնության գործում։

Արամ Ղանալանյանին իբրև գիտնական առավել հատկանշականը այն է, որ նա ուսումնասիրության նյութ էր դարձնում բանահյուսության այնպիսի տեսակներ, որոնք մինչև այդ ուսումնասիրված չեն եղել։ 1937 թ. լույս է տեսնում նրա «Հայ շինականի աշխատանքի երգերը», 1951 թ. «Առածանի» (երկրորդ անգամ՝ 1960 թ.), 1969 թ. «Ավանդապատում» աշխատությունները, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում է բանահյուսական առկա բոլոր բնագիր-նյութերը՝ գիտականորեն խմբավորված, դասակարգված և ենթարկված բազմակողմանի հետազոտության։ Այս երկու կոթողային աշխատությունները նրա գիտական վաստակի պսակն են կազմում, և ամեն մեկը մի ծանրակշիռ ներ-

գրում ։ Հայ բանագիտության և առհասարակ հայագիտության մեջ։

«Առածանին» ժողովրդական առածների ու ասացվածքների համահավաք ժողովածու է, այստեղ, առաջին անգամ լինելով, ի մի են հավաքված ու համակարգված հայ ժողովրդի ստեղծած առածների ու ասացվածքների հարուստ ժառանգությունը (շուրջ 40.000 առած ու ասացվածք)։ Ժողովածուի ծավալուն ներածության մեջ Ղանալանյանը բնութագրում է ժողովրդական առածներն ու ասացվածքները, պարզում դրանց ստեղծման ժամանակը, բացահայտում հայ ժողովրդի բաղաքական կյանքի, հոգեկան նկարագրի և միջավայրի արտացոլումը առածների մեջ, տարբերակում ընդհանուրը, փոխառյալը և տեղական ստեղծագործությունները, վերլուծում նրանց գաղափարական բովանդակությունը, բընում լեզվի ու արվեստի հարցերը։

«Ավանդապատումը» բովանդակում է ավելի քան 900 ավանդություններ, իրենց 400 տարբերակներով, որոնք բաղված են հաբյուրավոր սուրբ ու ձեռագիր գանազան աղբյուրներից՝ միջնադարյան մատենագիրների երկերից, աղգագրական, բանահյուսական ժողովածուներից, հնախոսական, տեղագրական և ուղեգրական աշխատություններից։ Բնագրին նախորդում է ընդարձակ Ուսումնասիրությունը, ուր հեղինակը տարբերագատելով ավանդությունները բանարվեստի մյուս տեսակներից, բնորոշում է դրանք որպես բանավոր արձակի փոքր ծավալի ստեղծագործություններ, որոնց մեջ արտացոլված են երկրի բնաշխարհի բնորոշ առանձնահատկությունները՝ սերտորեն կապված ու զուգորդված ժողովրդական հավատալիքների, ժողովրդի կենցաղի, նրա սոցիալ-անտեսական, աշխատանքային, հասարակական, բաղաքական, մշակութային կյանքի երևույթների ու հասկացությունների հետ։

Այս աշխատություններում արգասավոր դիտակետ, հենվելով դասական բանագիտության նվաճումների վրա, առաջադրել է ժողովրդական բանահյուսության հուշարձանների հրապարակման և հետազոտության իր սկզբունքները, որոնք լայն ճանաչում են գտել բանագիտության մեջ։

Գիտահետազոտական աշխատանքներին զուգընթաց Արամ Ղանալանյանը երկար տարիներ զբաղվել է նաև գիտա-մանկավարժական գործունեությամբ։ Նա Երևանի պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան և հեռակա մանկավարժական ինստիտուտներում դասախոսել է հայ ժողովրդական բանահյուսության առարկան, ստեղծելով հայ բանագիտության մշակված դասընթաց, որի մի քանի պրակները լույս են տեսել 1945—46 թվականներին։ Նա է հիմնադրել Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության բաժինը, որի գեկավարն է եղել 1943—1959 թվականներին։ Նրա գեկավարությամբ է աճել ու դաստիարակվել հայ բանագետների այժմյան սերունդը։

Դեռևս շատ սպասելիքներ ուներ հայ բանագիտությունը Արամ Ղանալանյանից՝ քանքարավոր գիտնականը շարունակում էր նույնքան ինքնամոռաց ու եռանդով ստեղծագործել, պատրաստում էր «Մանրապատում» և «Երգիծապատում» աշխատությունները, որոնք, դժբախտաբար, անավարտ մնացին։

Սկսած 1965 թվականից Արամ Ղանալանյանը «Պատմա-բանասիրական հանդեսի» գլխավոր խմբագրի տեղակալն էր։ Նա մեծ նվիրումով իր ջանքերը ի սպաս էր դնում «Հանդեսի» աշխատանքներին, ամենայն բարեխղճությամբ խմբագրում ներկայացված հայագիտական հոդվածները, հոգատարությամբ խորհուրդներ էր տալիս հեղինակներին, օգնում, ուղղություն տալիս նրանց։

Հայագիտության մեծ երախտավորը, գիտության նվիրյալը միաժամանակ ազնիվ ու անաչառ քաղաքացու կերպար էր։

Է. Ա. ՊԻՎԱԶՅԱՆ